
Առցանց հարցում

Կազմակերպության անվանումը և կազմակերպչի անունը:

Ինֆորմացիայի ազատության կենտրոն

Պետական գրանցման համար:

21117101863

Ղեկավարի անուն, ազգանուն:

Շուշան Դոյրոյան

Էլ. փոստի հասցե:

foi@foi.am

Հեռախոսահամար:

37410560360

Ձեր հարցումը:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

10.12.2018

340-68

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ

Գնել Սանոսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ պարտավոր է հրապարակել ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը:

«Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման եվ պահպանման, ինչպես նաև պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 2015 թվականի N 1204-Ն որոշման 8-րդ կետի համաձայն՝ վիճակագրությունն իրականացվում է ըստ բանավոր, գրավոր, վերահասցեագրված, մերժված և բավարարված հարցումների: Վիճակագրական տվյալներն առնվազն պարունակում են ստացված հարցումների ընդհանուր թիվը և տեսակը: Ամենամյա վիճակագրական տվյալները հրապարակվում են տեղեկատվություն տնօրինողի պաշտոնական կայքում:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածներով եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. 2016 եւ 2017 թվականների ընթացքում Ձեր գերատեսչության կողմից ստացված տեղեկություն ստանալու հարցումների տարեկան վիճակագրությունների հրապարակման աղբյուրները (Էլեկտրոնային հղումները):

2. 2018 թվականի 1-3 եռամսյակների ընթացքում Ձեր գերատեսչության կողմից ստացված տեղեկությունն ստանալու հարցումների վիճակագրության հրապարակման աղբյուրը (Էլեկտրոնային հղումները):

- 2016, 2017 թվականների և 2018 թվականի 1-3 եռամսյակների ընթացքում ձեր գերատեսչությանը տեղեկությունն ստանալու հարցմամբ դիմողներից քանի՞սն են եղել քաղաքացի, քանի՞սը՝ ՀԿ և քանի՞սը՝ լրագրող: Խնդրում ենք տվյալները տրամադրել առանձնացված՝ ըստ նշված ժամանակահատվածների:
Խնդրում ենք տեղեկությունն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Հարգանքով՝

ԻՎԿ Նախագահ Շուշան Դոյոյան

Իրավաբանական հասցե:

Երեւան, 0010, Փ. Բյուզանդի 1/3, 4-րդ հարկ

Քաղաքացիություն:

Հայաստան

Ծանուցման եղանակ:

Էլ.փոստի միջոցով